


տով վերագառնային իւրեանց հայրենիքը եւ միշտ մնային այն տեղ. այն ժամանակ այդ օտարութիւնը ինքեանք կստիւորէին Հայերէն, նոցա զաւակները կմեծանային ազգային ոգւով եւ ինքեանք կըմտցնէին մեր ընտանեկան կեանքի մէջ մի քանի լաւ եւրոպական յատկութիւններ: Բայց քանի որ նոքա ամուսնանալով օտարութիւններու հետ՝ համարեա մշտապէս մնում են օտար երկիրներում եւ աւելի յարվում են օտար կեանքին, նոցա զաւակները միշտ կորած կլինին Հայոց ազգի համար, որը պիտի հարկաւ սկսի նուազանալ թուով:

Աւարտելով խօսքս՝ ես հրաւիրում եմ մեր Մանչեսթերցի հայրենակիցների խոհեմամիտ եւ ազգասիրական ուշադրութիւնը իւրեանց վերոյիշեալ երեք թերութեանց վերայ, յուսալով որ սիրով եւ ներողամտութեամբ կընդունին սոյն մտերմական հրաւէրքը:

Վ. Վ. Բ.

22 (4) Նոյեմբ. 1877.

Ի Լ. Կ. Կ. Կ.:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱՌ. Պ. ՍԱՆԱՍԱՐԵԱՆՅ.

Խօսքս շարունակեմ Արարատ ամասնոց.

Որքան քաղցր է մարդոյս համար երբ իւր աշխատակիր բազկաց վաստակօրն զարգարեալ այդուց կամ պարտիզին մէջ տեսնէ քաղցրահամ պտուղներ եւ երկինքանդ անուշահոտ ծաղիկներ չորս կողմ սփռուած. ինչքան զուարճութիւն կզգայ նորա հո-

գեղմայլ սիրտն եւ որքան գոհունակ եւ զուարթ ժրպիտներ պիտի շողշողէ նորա դիմաց գծագրութիւնն ամեն վայրկեան, երբ իւր երկասիրութեան զեղեցիկ արտագրութեան կենդանութիւնն նկատէ. ես որ բնական բերմամբ միայն եւ ոչ արհեստական կրթութեամբ պարզեւտրեալ գրական ասպարեզում ըստ կարեաց զուն զործեմ մասնակցել ազգային ընդհանուր յատուցողութեան, ո՛րքան պատիւ անմին կհամարիմ իմ համբալ գրուածներն հրապարակի վերայ տեսնելիս, ոչ թէ անձնական սնապարծութեամբ, այլ խորհելով թէ Երիցուկն անգամ արբունի բուրաստանում մի անկիւն կարող է զարգարել եւ նորանէ առանձին օգուտ քաղողներ եւս կզտնուին. ըստ իս՝ ամենայն որ պարտի իւրեան ապագայ կեանք պատրաստել թէ յերկրում եւ թէ հանդերձելում՝ թէ իւրեան եւ թէ իւր համարարածոցն օգտակար:

Այս նպատակաւ ահա այս անգամ կուղարկեմ առ պատուական խմբագրութիւնդ մի քանի տաղաչափական գրուածք եւ մի ուղերձ առ Մեծ. Պ. Սանասարեանցն, որ արդեամբ բարերար է հանդիսացած զիրթէ Հայ ազգին եւ նորա մամոյ զարգացմանն. արդարեւ հազուադիւտ են այդպիսի ազնուասիրտ անձինք մեր ազգին մէջ. այս մասին ի դիմաց տեղւոյս Հայ հասարակութեան հրապարակաւ շնորհակալութիւն կըմատուցանեմ այն ազնիւ սրտերին, որոնք ի նպատակ ընդհանուր լուսաւորութեան ի հեռուստ անգամ մեզ կ'կարկառեն անխորաք ուսումնասէր ժողովրդեան կարօտութիւնն լրացնելու:

Ընդունեցէք ինդրեմ այս գրուածներս եւս հրատարակութեան բազդին արժանացնել, որով Պարսկաստանի խորքերում պանդուխտ եւ տառապեալ սրտիս ուրախ վնեկու. եւ որոյ մասին ահա կանխիկ իւր ջերմ շնորհակալութիւնն կ'մատուցանէ Ձեզ

Մ. Յ. ԲՃԵԿԵԱՆՅԵ.

1877 Նոյեմբ. 28

Ի Թէհրան.

Յաջորդ կրեսում ամիտփեցիք Պ. նա՝ մակազրի յղած ուղերձը:

ԱՌ ՄԵԾ․ Պ․ Մ․ ՍԱՆԱՍԱՐԵԱՆՅ․

Պու Տէր, զԹան մարդասէր, ցրուած պանդուխտ Հայերին,  
 Տուր բարութիւն մի քիչ էլ մեր այս զժբախտ օրերին:  
 Աշխարհումս օրէցօր ամեն ազգ յառաջ գնան,  
 Ենկարգ զրութեամբ միայն Պարսկահայեր եա մնան:  
 Եմենից շատ նեղութիւն կրեցին մեր նախնիքն,  
 Սակայն զորանց փոխադարձ չեղաւ մեզ հատուցումն:  
 Հատ տեղերում մեր Հայեր գործերով յաջողակ են,  
 Իւրեանց զուարճ օրերում արդեօք մեզ մտարեբն:  
 Այցեք ապա ազգասէր Մկրտիչ Սանասարեանց,  
 Որ իւր սրատես աչօք նկատեց մեզ հեռուանց,  
 Պիտեց Պարսից կեղծոնի Հայկազնեան վարժարանն,  
 Յանուն նորա շնորհեց իւր աննախանձ նուէրն:  
 Մայր Աթոռի Երարար ամսագիրը շարունակ  
 Ձրիաբար տալիս է մեզ իւր անուան յիշատակ:  
 Վահանձնդ դու, Թէհրանու Հայք վայելին քո նուէր,  
 Մատաղ մանկունք մշակին նորանով իւրեանց մտքեր:  
 Տեղուցս մեր ազգայինքն ստանան տեղեկութիւն,  
 Իարեւրմամբ կ'ուղղեն իւրեանց կրօնական թերութիւն:  
 Հատերի սրտի մէջն սերմանէ կրօնքի սէր,  
 Եձենալով զարգանան՝ տան քաղցրահամ պտուղներ:  
 Եղար բարի օրինակ, թող ընթացքիդ հետեւն,  
 Մեր ազգայինք տեսնելով բարի նախանձով վառուեն:  
 Երախտագէտ սրտիւ արդ մաղթէ Թէհրանու Հայք,  
 Որ քեզ օր կեանք երջանիկ շնորհէ Իարեւրարը:  
 Այս մաղթանքի ձայներէն վառուած անկեղծ ի սրբաանց,  
 Աեցե՛ն աչքի բարեբարք, կ'զոչէ Մ․ Իժշկեանց:

ՏՓԻԻՍԵԱՆ ԿՊԵՍԵԼԵԻՆՔԻ ՄԵՍՆԵԺՈՂՈՎՈՅ ՀԵՇԻԻ.

Ի նպատակ բարեանդի Հայոց նուէրներ հաւաքելոյ եւ մատակարարելոյ համար ի Տփլիս կազմուած Մասնաժողովոյ յանուն Վե՛ն. Հայրապետի ամենայն Հայոց ուղղած մի յայտարարութեան ճետ եղած տեղեկութիւններէն հետագայ հաշիւը քաղելով հրատարակել արժան կհամարիմք:

Մ—\*—.

		Ո՛՛՛՛	Ս.
Օգոստոսի 18,	Ե. Ենանովից ստորագրութեամբ ժողոված . . .	9531	93
»	» Կ. Իւրութովից ստորագրութեամբ հաւաքուած . . .	204	
»	» Ի. Սուրբուհովից ստորագրութեամբ հաւաքուած . . .	689	
»	» Եռեւրական բանկի տոմսակնիքի տոկոսից . . .	41	72
» 23,	Պ. Երժրունուց ստորագրութեամբ հաւաքուած . . .	323	21